

Հաստատեամ զշաւիզս իմ ի ճանապարհի քում, զի մի զայթակղեսցին գնացը իմ։ (Սաղմ. ԺԶ. 5.)

Թարգմ.

Գ. Ե. Եղի. Աբովյանի էականց

Կ Լ Ի Մ Ա Յ

Ալմաների դադարեւում։ — Ալմաների յառաջանալու զիտաւոր պատճառն այն է, որ արեւ երկրիս մակերեսոյթի զանազան մասերը մատեսակ չեւ տաքացնում։ Այն երկիրները ուր արեւ ճառագայթները տարայ մեծ մասը ընկնումեն ուղղակի, ունին տաք կլիմայ, զօրով ինակ, հասարակածի մօտ և արեւագարձի դեպի հիւսիս և հարաւ եղած երկրների մօտ իսկ ուր արեւ ճառագայթները ընկնումեն շատ կամ քիչ անուղղակի կերպիւ, այնամեղ նորանք կորցնումեն իւրեանց զօրովթեան մեծ մասը, և որքան աւելի մօտ է բեկոներին՝ այնքան աւելի սառն է լինում կլիման, և վերջապէս արեւը, որ հազիւ է բարձրանում հորիզոնի վերայ. — մինչև անդամ բեկուային ամառայ ժամանակ, երբ նա ամբողջ շարաթներով ու ամիսներով մայր չեւ մտնում, հազիւ հազ կարողանումէ բեկուային ծովերի սառոցը հալեցնել. Մէկ կլիմոյի դեպի միւսը անցնելը համարեա աննկատելի է, և երբեմն ևս բաւական նկատելի է լինում, ընդհանրապէս օրուայ միջին ջերմութիւնը, որով կարելի է քննել մօտաւորապէս կլիմայի յատկութիւնը։ Հաւասար է մօտաւորապէս իւրաքանչիւր 15 աշխարհազարական մղոնում. — Հասարակածից դէպի երկու բեկոները, բէօմիւրի 17^o աստիճանին, Այսպէս հասարակածային երկիրների տարւայ օզի միջին ջերմութիւնը 26^o աստիճանից աւելի է լինում մինչդեռ Աւնայում, որ հիւսային լայնութեան 48 աստիճանի տակ է ընկած, լինումէ 10^o, իսկ Մելվիլ կղզում, և հիւսիսային Ամերիկայում, որովք գտանում են հիւսիսային լայնութեան 74 և 75^o աստիճանի տակ, տարւայ միջին ջերմութիւնը հաւասար է 18 աստիճանի։

Առվել աշխատանքներ կլիմայի վեր։ — Հասարակածից հաւասարապէս հեռացած տեղերը չունին միշտ միւսնոյն կլիմայ, որովհետեւ երկրիս մակերեսոյթի որպիսութիւնը և ձեւը մեծ ազդեցութիւն ունին տաքովթեան տարածման վերայ, սա ևս մեծ ազդեցութիւն ունի կլիմայի վերայ. Մէծ ջրամբարների մօտաւորութիւնը բաւական շափաւորումէ կլիման. Խչղէս որ յայտնի է ջուրը աւելի ուշ է տաքանում քան թէ երկիրս, այսինքն նորան տաքացնելու համար հարկաւոր է աւելի մեծ տաքովթեան աստիճանը, քանթէ մի այդպիսի երկրին։ Ուստի և ջուրը սառչումէ աւելի ուշ քան թէ երկիրս, որով և ովկիանոսները և ծովերը զառնումեն ջրի յատկութեան պատճառաւ մի ահազին տաքովթեան պահարան՝ որը մեղմացնումէ հասարակածից հաւասար կերպով հեռացած երկիրների կլիմայն հակառակ նրան, որ պիտի լինէր առաջ, ըսդհակառակն, երբ մի երկիր աւելի հեռու է

ծովից, այնքան աւելի սաստիկ ցուրտ է լինում Նորա կլիման մնացած պայմանների կատարման միջոցին, և այնքան աւելի տարբեր են լինում թէ ձըմուայ թէ ամառւայ թէ օրւայ և թէ գիշերի տաքութիւնները:

Ծովիգերեայ երկիրներում ամառւայ շոքը և ձմուայ ցուրտը այնքան սաստիկ չեն լինում և ցուրտ եղանակների փոխուելով դէպի տաք, այնքան խիստ չեն, ինչպէս ցամաքային միջին երկիրներում, Ցամաքային և ծովային կլիմաների այս զանազանութիւնը շատ զգալի է լինում Եւրոպայում, երբ մինը Ասլանդեան Ովկիանոսի ափերից դէպի արեւելք է ճանապարհորդում. Լոնդրայում ձմուը աւելի մեղմ է լինում և ամառը աւելի քիչ չոք, քանթէ Օրէնքուրգում՝ որ միենայն լոյնութեան տակ է ընկած. Հըռունուեան հսկիսուում հիւսիսային լայնութեան 50° տակ հասնումէ խաղող, մինչդեռ արեւելեան Ռուսաստանում միենայն լոյնութեան աստիճանի տակ հազիւ բուսնումեն պտղատու ծառերը, Նորվեգեայի ծովեզրեայ շերտերի կլիման Հիւսիսային ափերում, Հնայելով Նորանց հիւսիսային դրութեանը լինում է բարիսառն՝ ծովային հոսանքի պատճառով, որ կոչվում է «Գոլֆզդրամ»—որը սկսելով Մեկսիկայի ծոցից անցնումէ Ամերիկայի արեւելեան ափերով դէպի հիւսիս, և յետոյ այնտեղից վերապասնալով դէպի արեւելք և անցնելով Եւրոպայի ափերով թափուով թափուով սառուցեալ Ովկիանոսը, Ներքին ծովերն ու մեծ լճերն եւս, Ովկիանոսի նման, կարողանումեն փոքր ինչ մեղմացնել կլիման, բայց Նորանց ազգեցութիւնը լինումէ միայն մերձակայ շրջակայիքի վերայ,

Թէ երկրի հասարակածից ունեցած չեռաւորութիւնը և թէ երկրի բարձրութիւնը ծովի մակերեսոյթից, ազգեցութիւն են ունենում կլիմայի վերայ. լեռներում օդն աւելի անօսր լինելով, Նորա մէջ տաքութեան պաշարն ես շատ քիչ է լինում, հողի տաքութեան ճառագայթ արձակուումն աւելի զորեղ է, ուստի կլիման ես ցուրտ է, քան թէ հովիաներում. Բարձրաւանդակների վերայ և լեռան ստորոտներում ձմուը աննկատելի կերպիւ ամառի է փոխվում և շատ անդամ ամառւայ գեղեցիկ տաք օրերից յետոյ հետեւումեն ցուրտ գիշերներ. Ընդհանրապէս օդի փոփոխութիւնը լինումէ բարձրաւանդակ երկիրներում արագ և զգալի:

Բարձր ուշեւը ուշեւը ուշեւը ուշեւը ուշեւը ուշեւը ուշեւը — Նորեւում Նորանից, որ Պետերբուրգ՝ լինելով հիւսիսային լոյնութեան 60° աստիճանի տակ, Նորա տարւայ միջին ջերմութիւնը միենայն է, ինչ որ է հարաւային Ամերիկայի մէջ գտնուած Անտեղանա հրաբուխինը, որը գրեաթէ հասարակածի տակ է գտնվում. այսինք, Պետերբուրգ բարձր է ծովի մակերեսոյթից մի քանի ոտնաչափ, իսկ Անտեղանա — 13000 ոտնաչափ, և իրաւի որ տարւայ միջին մի ջերմութիւնը նոււազումէ իւրաքանչիւր 550 ոտնաչափ բարձրանալուց 1° աստիճան, այնպէս որ բարձրանալով արեւագարձերկրի բարձր հրաբուղիսի վերայ, կարելի է զդալ կարճ ժամանակում զանազան կլիմաների ազդեցութիւնը, սկսելով արեւագարձ երկրի լերան ստրոտի կլիմայից մինչև Նորա գագաթը, որ ծածկւած է մշտական ձիւնով:

ձահեները ցրտացնում են և խոնաւացնում կղիման մանաւ անդ հիսսաւ-
յին կողմերում, մինչդեռ աւազու և ժոյուս տեղիրում լինում է կղի-
ման աւելի մեզմ ջրմութեան նուազ շարժմունքներով:

Անդառները պահպանումեն գետինը արեի տակ ճառագայթներից և չո-
րութիւնից, միւս կողմից տերեւները արգելք են լինում նորան շուտով
սառչելու ճառագայթներ արձակելուց: Սորա համար անտառային երկիր-
ներում ամառը այնքան շոք չէ լինում և ձմեռը այնքան ցուրտ
ինչպէս անտառներով աղքատ մերձակայ երկիրներում: Ցերեկ, այ ջեր-
մութեան շարժութունը անտառներում նոյնպէս քիչ զորեղ է լի-
նում, ուստի այնտեղ ցերեկւայ տաքութիւնը այնպէս զգալի չէ, ինչպէս
բաց դաշտում: Տիրապետող քամիների բնաւորութիւնը և ուղղութիւնը
մեծ ազգեցութիւն ունին ամրողջ երկիրների կղիմայի վերայ: և նոյնպէս
մասնաւոր տեղերինը, որովհետեւ քամիները բերում են իրենց հետ երեմն
տաք և երբեմն սառն օդի մասնիկները: Օգային հոսանքները որոց մենք
կոչումնելք քամիներ, կախւած են երկրին մակերևոյթի զանազան մասերի
և նորա մօտ գտնուած օգային շերտերի անհաւասար տաքանալուց: Երե-
րիս վերայ օդն անմիջապէս հոսումէ ցուրտ տեղերից զեպի տաք տեղերը,
որոնք անցնելով սառն տեղերը, օդի ծանր զանգուածները զուրս են հա-
նում աւելի տաք մասնիկները, թէմեները վերեից և կողմերից բռնելով
նոցա սեղը, չեն սանտիկ թեմեանում: մինչեւ որ չարաւանանան բոլորովին,
և յետոյ տեղի են տալիս աւելի սառն օդին: Այս կերպով օդի սառն ու տաք
զանգուածները անցնում են աչաղին տարածութեան միջից, և նոցա օդնա-
կանութեամբ սառն կամ անսովոր տաք երկիրների ազգեցութիւնը տարած-
ումէ բաւական մեծ հեռաւորութեամբ: Հարաւային և արեւմտեան և, բոսպայի
կղիմանների բարեխառնութիւնը կախւած է տաք քամիներից: որոնք զալիս
են Սահարայի անապատից միջերկրականի ծովով, Արևելեան Հայկաստանից
և հարաւային Ամերիկայից Ալյանդեան Ովկիանոսով (Անրոքո հարաւային
ֆրանսիայում և Խտալիայում, Ֆէօն Զուիցերիայում և հարաւային վեր-
մանիայում): Եւրոպայի միւս կողմերը այսինքն հիւսիսույին և հարաւային
շնորհիւ հիւսիսային ծովերի սառույցների գտնուումն ջերմութեան ազգեցու-
թեան տակ: Բոլորին՝ յայտնի է, որ կանոնաւոր հոսանքներ յառաջանալով
հարաւային ծովերի ափերի վերայ, մեծ ազգեցութիւն ունին այնտեղի եր-
կիրների տաք ամառւայ ջերմութեան վերայ: Աչա ինչպէս է յառաջանում
այս հոսանքները, արեի ներգործութեամբ երկիրս աւելի շուտ է տաքանում
քան թէ ջուրը, սորա համար ցերեկը փչումէ ծովերից ցուրտ քամին, իսկ
երեկոյեան՝ որ արդէն երկիրս սկսած է սառչիլ և ջուրը պահպանել իւր
բոլոր տաքութիւնը: այն ժամանակ այս քամու հոսանքը լինումէ ցամաքից
զեպի ծովը շարունակ երեկոյից սկսած մինչեւ առաւօտ: Այսպիսի քամի-
ների կանոնաւոր փոփոխութիւնը կատարումէ նաև լերան ստորոտներում:
ցերեկը քամին փշումէ ներքեից զեպի վեր, վասն զի լերան մակերևոյթը
աւելի զօրեղ է տաքանում: քան թէ նորա ստորոտը, իսկ զիշերը վերեկց

ներքու է փշում, որովհետև բարձր տեղերը աւելի շուտով են սառչում քան թէ ցած վայրերը:

Ըստ անգամ պատահում են այնպիսի տեղեր, որոնք չորս կողմից պատած լինելով լեռների շղթաներով, աղատ են մնում հիւսիսային և արեւելեան քամիների ներգործութիւնից, Այդպիսի տեղերը կարող են ունենալ մեղմ կլիմայի, չնայելով նորա բարձր դրութեան, այսպէս Ալպեան բժշկական վայրերը որոնք վերջին ժամանակներում օգուտ են տալիս բարակացաւ ու նեցողներին: Ընդհակառակ, այն երկիրները, որոնք հիւսիսային և արևելեան սառն քամիների համար բաց են, միշտ զանազանութեան իւրեանց խիստ կլիմաներով: Այսպէս ևս լինումէ շատ լեռնային հովիտներում, ուր բոլոր քամիները խառնվում են միմեանց հետ:

Խոնաւութեան քանակութիւնը՝ որը գտանվումէ օդի շարժական զանգուածներում: ունի փոքր ինչ ազդեցութիւն կլիմայի և եղանակի վերայի Արևմտեան քամիները անցնելով Միջերկրական ծովից և Ատլանտիկան Ովկիանոսից՝ զառնութեան Եւրոպայի համար անձրեարեր քամիներ, որովհետև նորանց բերած օդի մէջ գտանւում են շատ խոնաւութիւնք: Այսու ամենայնիւ այս քամիները կորցնում են ծովեղբայ երկրներում իւրեանց խոնաւութեան մեծ մասը, և անցնելով հետզհետէ ցամաքի միջի երկիրներից՝ աւելի և աւելի չորանում են: Երևելեան քամիները միջին և արևմտեան Եւրոպայի համար չոր են, վասն զի Ասիայի և արևելեան Եւրոպայի ահազին տարածութիւնները անցնելով՝ կորցնում են ջրի մծ քանակութիւնը: Ընդհանրապէս մեծողորտի մնացորդն անձրենի և ձեան քանակութիւնը՝ Եւրոպայում արև մտքից արևելք նուազումէ աստիճանաբար, արևմտեան Անգլիայում նոցա տարեկան քանակութիւնը հասնումէ մինչև 36 մատնաշափին, Գերմանիայում միջին թուռով 29 մատնաշափին, իսկ Ռուսաստանում 18 մատնաշափ քիչ աւելի:

Ներքին ծովերի կամ մեծ լճերի և կամ թէ այնպիսի լեռնաշղթաների մօտ, որոնց գագաթների վերայ սառչումն տաք և խոնաւ օդային հոսանքներ, եկած անձրեների քանակութիւնը աւելի շատ է լինում: Քանի մէ նորա մերձակայ տեղերի տարեկան միջին քանակութիւնը՝ Արևմտեան Եւրոպայում՝ աւելի շատ անձրեները զալիս են աշնան և ձմռնուայ ամիսներում, իսկ Եւրոպական ցամաքի միջին երկրներում տիրտապետում են ամառնային անձրեներ, և որքան աւելի զեղսի արևելք երթանք, այնքան այս տիրտապետում զօրեղ է լինում: Հիւսիսային Գրանսիայում և Գերմանիայում անձրենի ընդհանուր քանակութիւնը հասնում է ամառ ժամանակ 34° , ամառնային անձրեները ձմռն ժամանակ $18 - 10^{\circ}$: իսկ արևելեան Ռուսաստանում ամառ ժամանակ հասնում 54° , միայն ձմռն ժամանակ 10° : Աշնանային անձրեները տիրտապետումն միջերկրական ծովի ափերի վերայ իսկ ամառնային անձրեները Ալպեան և Կարպատեան լեռներից գեղի հիւսիս: Երևելագարձային երկիրները զանազանութեան իւրեանց ժամանակաւոր անձրեներով: այնտեղ տարին երկու մասի է բա-

ժանւում, — չոր և անձրեային, անձրեայինը շարունակւումէ Յունիամսից մինչև Կոյեմբեր, Անձրեային եղանակում օդի բարեխառնութիւնը սովորաբար բարձր է լինում և իջնումէ մի քանի աստիճան ցած, արեագարձի ձմեռը սկս ելուն պէս, սովորաբար Դեկտեմբեր և Յունվար ամբաներում, Կան այնպիսի արեազարձային երկիրներ, որոնք գտան ելով տեղական պայմանների ազգեցութեան տակ, ունենում են երկու անձրեային տարւայ եղանակ։

Դէք. Ելեն։

ՊԵՏՐՈՒԾԿԵՑԼ

ԿՐՈՆԱԿԵՆ ԱԶԵՑՈՒԹԵԱՆ ԵԽԹԻՒ.

Ա. Հա բաւական ժամանակ է, որ մեր լրագրութիւնը զբաղուած է մի ծանր բայց ոչ ժամանակակից խնդրով. Մեր լրագրները զբաղուած են Հայերի եւ ու ծացեալ հայերի բանակախներով. Այդ բանակախւը գնալով սաստկացաւ եւ գուցէ երկար կշարունակուի: Ես այդ բանակախւը, նայելով իւր պատճառին, ծանըր համարեցի. վասն զի դժուար է խնդիրը երկուստեք պարզ եւ անկողմնապահ ոգւով հետազօտել. եւ իւրաքանչիւր մի բառ, որ անզգուշաբար գուրս է թողնվում, կարող է մոլորեցնել ընթերցող հասարակութեանը, որ միջոց կամ հմտութիւն չ'ունենալով բանի էութեանը հասու լինել, ամեն մի գրուածք հալած իւղի տեղ է լնդունում: կամ մի կողմ շպրտում հակակրութիւն ունենալով գէպ ի գրողը, Ես ժամանակակից խնդիր չեմ համարում յիշեալ բանակախւը, վասն զի այնպիսի մի ժամանակ, երբ սովն ու թանկութիւնը մի կողմից, աղքատութիւնըն ու թշուառութիւնը միւս կողմից անտանելի դրութեան են հասցըել մեր ժողովրդին, պէտք է սէր ու կարեկցական միութիւն քարողել ազգի զանազան մասերի մէջ՝ օգնելու միմեանց. եւ ոչ թէ, անտեղի բանակախւներով նորոգել հին ցաւերն եւ նոր ի նորոյ ատելութիւն սերմանել ազգի պառակուած մասերի մէջ կրօնական խնդիրներ յուղելով, եւ այս կամ այն հատուածի սրտին դիպչելով յախուռն դատողութեամբ: Բայց որովհետեւ խնդիրը արդէն բաւական ժամանակ է որ յուղուած է, եւ իւրաքանչիւրը իւր կամքին կամ կրքին համեմատ ձգձրգեց, ներելի լինի մի քանի խօսք եւս իմ կողմից ասել իբրեւ մի անհատ: